Կրոնի ազատությունը եւ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները եւ երիտասարդները

Եվրոպայի խորհուրդ

Փաստաթղթային հետազոտություն

Իզաբելլա Սարգսյան

Երևան 2014

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Փաստաթղթային հետազոտություն

Իզաբելլա Սարգսյան

2014

ՀՏԴ342.731:323.1(042.3)
ԳՄԴ 67.400
Ս 259

Սարգսյան Իզաբելլա
Ս 259 Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները: Փաստաթղթային հետազոտություն / Ի. Սարգսյան.- Եր.: Եվրասիա համագործակցության հիմնադրամ, 2021.- 56 էջ:

Այս զեկույցում արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել Եվրոպայի խորհրդի տեսակետների հետ: Սույն հետազոտությունն իրականացվել է Նիդերլանդների թագավորության դեսպանատան կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության շրջանակներում: Զեկույցի բովանդակությունը պատկանում է բացառապես Եվրոպայի խորհրդին և կարող է չհամընկնել Նիդերլանդների թագավորության դեսպանատան տեսակետների հետ:

Սույն հրատարակության հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպայի խորհրդին: Այս հրատարակության որևէ մաս չի կարող վերահրատարակվել կամ որևէ ձևով և որևէ կերպ՝ էլեկտրոնային (լազերային սկավառակով, համացանցով և այլն) կամ մեխանիկական եղանակով, ներառյալ պատճենահանմամբ, ձայնագրմամբ կամ տեղեկությունների պահման և առբերման որևէ եղանակով տրամադրվել առևտրական նպատակներով առանց գրավոր համաձայնություն ձեռք բերելու Բուդապեշտում գտնվող Եվրոպական երիտասարդական կենտրոնի երիտասարդական բաժնից. 1-3 Zivatar utca, H-1024 Բուդապեշտ, Հունգարիա: Էլ փոստ eycb.secretariat@coe.int:
Սույն հրատարակման բովանդակության վերարտադրությունը թույլատրվում է միայն ոչ-առևտրային կրթական նպատակներով և պայմանով, որ աղբյուրը նշվի ինչպես հարկն է:

Սույն փաստաթղթին վերաբերող ցանկացած այլ հաղորդակցություն պետք է հղվի Եվրոպայի խորհրդի երիտասարդական բաժնին.

Եվրոպական երիտասարդական կենտրոն, Ստրասբուրգ
30, rue Pierre de Coubertin

F- 67075 Strasbourg Cedex – France Էլ փոստ. youth@coe.int

Սրբագրվել է Ռեչել Էփըլբիի կողմից
Խմբագրվել է Մենո Էտեմայի և Իզաբելա Սարգսյանի կողմից

Kingdom of the Netherlands

Փաստաթղթային հետազոտությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի <<Հայաստանի կրոնական և էթնիկ փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն>> ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացումը ֆինանսավորվել է Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան կողմից:

ISBN 978-9939-896-02-1
© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021
ՀՏԴ 342.731:323.1(042.3)
ԳՄԴ 67.400

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն» ծրագրի մասին 5

Ներածություն 8

Ընդհանուր դիտարկումներ 12

Երեխաներ եւ երիտասարդություն 16

Այս հետազոտության հատուկ խնդիրները 18

Փաստաթղթերի վերլուծություն 20

Իրավական խնդիրներ եւ կիրարկման պրակտիկա 23

Հայաստանի փոքրամասնություններն ու նրանց կազմակերպությունները . 26

Հանրային ընկալումներ 31

I. Ստիգմա եւ սոցիալական մեկուսացում 36

II. Խտրականություն կրթության ոլորտում 40

1. Հայոց Առաքելական Եկեղեցու պատմությունը որպես դպրոցական պարտադիր առարկա 40

2. Դպրոց չհաճախելը 42

III. Վաղ ամուսնություններ 43

Առաջարկություններ 46

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Առկա ուսումնասիրությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի երիտասարդական բաժանմունքի «Հայաստանի կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն. առցանց պայքար անհանդուրժողականության դեմ» ծրագրի շրջանակներում Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանության ֆինանսական օժանդակությամբ:

Ծրագիրը կենտրոնացել է փոքրամասնություն կազմող խմբերի, հատկապես կրոնական փոքրամասնություններին պատկանող երեխաների և երիտասարդների իրավունքների վրա և նպատակ ունի կրթության ու իրազեկվածության բարձրացման միջոցով պայքարել փոքրմասնությունների դեմ ուղղված անհանդուրժողականության դեմ: Փոքրամասնությունների երեխաների և երիտասարդների խնդիրները լավ հասկանալն այդ գործընթացում կարևոր քայլ է, որը չի կարող իրականացվել առանց երեխաներին և երիտասարդներին ներգրավելու:

Փոքրամասնություն կազմող խմբերը՝ ներառյալ կրոնական փոքրամասնությունները, ընդհանուր հասարակության կողմից և իրենց համայնքի շրջանակներում ենթարկվում են երբեմն չգիտակցված ճնշման: Փոքրամասնությունների երեխաները և երիտասարդները կարող են ենթարկվել կրկնակի խտրականության. մի կողմից նրանք խոցելի են, կարող են հեշտությամբ հայտնվել խտրականության և խարանի թիրախում, մյուս կողմից փոքրամասնություններին հատուկ մեկուսացվածությունը խորացնում է այդ խտրականությունը:

Կրթությունը և կրթական ֆորմալ ու ոչ ֆորմալ մոտեցումների զարգացումն անհրաժեշտ է մարդու իրավունքների և արժանապատվության արժեքների ընկալում ձևավորելու համար, և այդպիսի նշանակալի հարցերի անդրադառնալիս էական է երեխաներին լսելը: Քարոզարշավներ կազմակերպելու և համապատասխան, թիրախավորված կրթական գործողություններ իրականացնելու համար մեր աշխատանքը պետք է հիմնված լինի էմպիրիկ տվյալների և որակի վերլուծության վրա. ամենից էական խնդիրները որոշելը և երեխաների իրականությունն իմանալը կարևոր են իրավիճակը հասկանալու համար: Ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները նպաստում են հետագա գործողություններին՝ տրամադրելով փաստերի վրա հիմնված տեղեկատվություն, որն այնուհետև հիմք է հանդիսացել կրոնական անհանդուրժողականության դեմ պայքարի հետագա միջոցների պլանավորման և փոքրամասնություններին պատկանող երեխաների իրավունքների պաշտպանության համար:

Քանի որ երեխաները և երիտասարդներն աստիճանաբար ավելի շատ են իրենց հայացքներն արտահայտում, տեղեկատվություն ձեռք բերում և շփվում սոցիալական մեդիայի միջոցով, և քանի որ համացանցը նաև խտրականության և ատելության դրսևորման հարթակ է, հատուկ ուշադրություն է դարձվել ԵԽ-ի «Խոսքն առանց ատելության» հայաստանյան շարժման հետ կապի ապահովմանը:

Ծրագիրը կառուցված էր երեք նպատակների շուրջ.

- բնակչության (ներառյալ երիտասարդների և երեխաների) շրջանում իրականացնել ուսումնասիրություն հետագա հետազոտությանը նպաստելու և խտրականության դեմ առցանց քարոզարշավը կազմակերպելու համար էմպիրիկ տվյալներ տրամադրելու նպատակով,

- մոբիլիզացնել երիտասարդական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերի կոալիցիաներ կամ գործընկերություն ստեղծելու նպատակով, որը կնպաստի անհանդուրժողականության դեմ երիտասարդական քարոզարշավներին, ներառյալ առցանց քարոզարշավներին,

- կազմակերպել ուսուցանողների, երիտասարդական առաջնորդների և այլ տարածողների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքային սեմինարներ՝ իրազեկվածությունը բարձրացնելու և անհանդուրժողականությանն անդրադառնալու նպատակով:

Ի հավելումն այս ուսումնասիրության՝ ծրագիրն այսպիսով ընդգրկել է.

- Խորհրդակցություններ երեխաների և երիտասարդության քաղաքականությանն առնչվող մարդու իրավունքների, երեխաների և երիտասարդական կազմակերպությունների և հանրային հաստատությունների հետ ծրագրի համապատասխանության և հավանական կենտրոնացման մասին՝ նախկինում իրականացված նմանատիպ ծրագրերի հետ փոխլրացվածությունն ու շարունակականությունն ապահովելու համար:

Շահագրգիռ կողմերի հանդիպում, հանրային ներկայացում, ուսումնասիրությունների արդյունքների քննարկում և հետագա գործողությունների նախապատրաստում:

- Մարդու իրավունքների ուսուցմանն ուղղված դասընթաց ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության շաղկապմամբ. փոխանակվել են մեթոդներ, մոտեցումներ, լավագույն փորձառություններ և կրթության ոլորտի տարբեր դերակատարների համար տեղական ցանց է ստեղծվել: Ուսուցիչները, երիտասարդական աշխատողները, ուսուցանողները և ՀԿ-ները միասին աշխատել են երեխաներին և մարդու իրավունքները պաշտպանելու, ատելություն արտահայտող խոսքի և խտրականության դեմ պայքարելու ընդհանուր նպատակով: Արդյունքում ամրապնդվել է երկու հատվածների միջև երկարաժամկետ համագործակցությունը և բարձրացել է իրազեկվածությունը մարդու իրավունքների ուսուցման անհրաժեշտության վերաբերյալ:

- Առցանց և տպագիր լրատվամիջոցների լրագրողների համար աշխատանքային սեմինարներ կրոնական փոքրամասնությունների խնդիրները պատշաճ կերպով լուսաբանելու և կողմնակալ լուսաբանումն ու ատելության արտահայտչաձևերը տարբերակելու գործիքների վերաբերյալ: Առցանց "Pop-up newsroom"-ը համախմբեց 30 լրագրողի՝ հրապարակելով Հայաստանում դավանանքի և խղճի ազատության թեման լուսաբանող զգալի թվով հոդվածներ:

- Երիտասարդական կազմակերպությունների համար փոքրիկ դրամաշնորհներ կրոնական և մշակութային փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականությանը և երեխաների իրավունքները հասկանալուն ուղղված երիտասարդական նախաձեռնություններին օժանդակելու նպատակով: Երիտասարդների կողմից և նրանց իսկ համար հինգ ծրագիր է իրականացվել երկրում, ինչպես օրինակ կրոնական բազմազանության վերաբերյալ Հայաստանի միակ մզկիթում տեղի ունեցած ֆոտոցուցահանդեսը, փոքրամասնությունների ներկայացուցիչների համար եռօրյա դասընթացը և ուսանողների համար մեկօրյա միջոցառումը, որը նրանց նաև խրախուսում էր տարածել սովորածը:

- Արդյունքների տեսանելիություն և դրանց, ինչպես նաև խնդիրների մասին իրազեկվածության բարձրացում հետևյալ կայքի միջոցով www.nohate.am/freedom-of-religion:

- Կրոնական հիմքի վրա խտրականության դեմ պայքարի գործողությունների ներառում «Խոսքն առանց ատելության» շարժման Հայաստանի ազգային քարոզարշավի ծրագրում կրթական ռեսուրսների ու գործիքների տարածման և հայաստանյան քարոզարշավին օժանդակելու միջոցով,

- Քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված համայնքային հանդիպումներ Արմավիր, Գյումրի, Իջևան և Վանաձոր քաղաքներում. համայնքներում իրականացված աշխատանքային սեմինարների 114 ուղղակի շահառուների ուշադրությունը հրավիրվել է թեմայի վրա և նրանք հնարավորություն են ունեցել ավելի լավ հասկանալ կրոնական փոքրամասնությունների երեխաների և երիտասարդների դեմ ուղղված ատելություն պարունակող արտահայտությունների վտանգը և սովորել այն հաղթահարելու եղանակները:

Ծրագիրը կիրառել է «Հայաստանի կրոնական և ազգային փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն» հետազոտության արդյունքները որպես գործիք կրոնական փոքրամասնությունների երեխաներին ուղղված խտրականության դեմ կանխարգելիչ միջոցների անհրաժեշտությունը փաստելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը Եւրոպայի խորհրդի լիիրաւ անդամ է դարձել 2001թ. հունվարի 25-ին եւ այդ ժամանակից ի վեր ստորագրել եւ վավերացրել է Եւրոպայի խորհրդի 59 կոնվենցիաներ, այդ թվում՝ մարդու իրավունքների եւ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ ամենակարեւոր փաստաթղթերը[1]:

2013թ. մայիսի 16-ին Հայաստանը առաջին անգամ վեց ամիս ժամկետով ստանձնեց Եւրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահությունը: ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Եւրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) իր ելույթի ընթացքում ընդգծեց Հայաստանի նախագահության առաջնահերթությունները եւ, մասնավորապես, ասաց. «Հայաստանի նախագահությունը հետամուտ է լինելու Եւրոպայում ռասիզմի եւ այլատյացության դեմ պայքարին, միջմշակութային երկխոսության միջոցով եւրոպական արժեքների խթանմանը, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության եւրոպական չափանիշների ամրապնդմանը, ինչպես նաեւ ժողովրդավարական հասարակությունների խթանմանն ու եւրոպական ճարտարապետությունում Եւրոպայի Խորհրդի դերի ամրապնդմանը»[2]:

2013թ. մարտին Եւրոպայի խորհուրդը ազդարարեց «Խոսքն առանց ատելության» շարժման սկիզբը[3]: Վերջինիս նպատակն է նպաստել ատելության քարոզչության դեմ պայքարին, գործել միասին առցանց հարթությունում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ, բարձրացնել իրազեկվածության մակարդակը եւ մոբիլիզացնել համայնքները: Հայաստանում ազգային քարոզարշավը պետք է իրականացվի երիտասարդության բնագավառում հասարակական եւ պետական հատվածի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ՝ համակառավարման ոգով[4]:

Չնայած դրան, հայաստանյան հասարակությունում նկատվում է խտրականության եւ անհանդուրժողականության զգալի աճ, մի միտում, որը ՀՀ իշխանությունները հաճախ անտեսում են: Հայաստանում առկա անհանդուրժողականության բազմաթիվ դեպքեր արծարծված են միջազգային եւ տեղական կազմակերպությունների զեկույցներում: Օրինակ՝ Ամնեսթի ինտերնեյշնլը, որը չափազանց մտահոգված է Հայաստանում արտահայտման ազատության հետ կապված իրավիճակով, վերջերս հրապարակել է «Հայաստան. անհանդուրժողականություն բազմազանության

[1] http://mfa.am/hy/international-organisations/CoE/, www.conventions.coe.int
[2] http://armenpress.am/arm/news/723831/
[3] տե՛ս, www.nohatespeechmovement.org, սպասվում է www.nohate.am հայալեզու կայքը
[4] http://nohate.ext.coe.int/

հանդեպ» (Armenia: No space for difference (2013թ.)) խորագրով հատուկ զեկույց, որտեղ խստորեն դատապարտվում են արտահայտման ազատության սահմանափակումները[5]: Պետք է նշել նաեւ, որ ատելության դրսեւորման եւ անհանդուրժողականության շատ դեպքեր տեղ են գտնում համացանցում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Եւրոպական Միությունը, Միացյալ ազգերի կազմակերպությունը եւ այլ միջկառավարական եւ միջազգային կազմակերպություններ հորդորում են Հայաստանին հնարավորինս արագ ընդունել խտրականությունն արգելող օրենք[6]: 2012թ. հոկտեմբերին Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը նախաձեռնեց խտրականությունն արգելող օրենքի նախագծի մշակումը՝ հաշվի առնելով խտրականության արատավոր երեւույթը եւ դրա կանխմանն ուղղված գործողությունների կարեւորությունը: Ձեռք էին բերվել նախնական պայմանավորվածություններ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եւրոպական հանձնաժողովի հետ նախագծի ավարտական տարբերակի փորձաքննության եւ փորձագիտական եզրակացություն տրամադրելու մասին[7]: Սակայն, այս պահին գործընթացը կարծես սառեցվել է եւ, դեպի Մաքսային միություն Հայաստանի վերջերս կատարած քայլերի եւ ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների դադարեցման համատեքստում, այն կարող է հետաձգվել կամ դադարեցվել:

Պահպանողական շրջանակների ուժեղ դիմադրության եւ ոչ կառուցողական վերաբերմունքի մեկ այլ վառ օրինակ կարող են ծառայել «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի շուրջ ծավալված վերջին զարգացումները: Օրենքն ընդունվեց 2013թ. մայիսին միջազգային հանրության զգալի ճնշումների արդյունքում՝ ներառելով ընդհանուր ջանքերով մշակված բազմաթիվ առաջարկություններ: Այս օրենքի նախագծի շուրջ համատեղ լսումներ են իրականացվել ԵՄ խորհրդարանական խմբի եւ ՀՀ ԱԺ մարդու իրավունքի պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ու Եւրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի մասնակցությամբ[8]:

---

5 http://amnesty.org/en/library/asset/EUR54/002/2013/en/6d6a852f-6494-4ef5-bc13-1373f154e0de/eur540022013en.pdf

6 Ընդունել խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն, այդ թվում՝ կատարել գենդերային հավասարության եւ խտրականության դեմ ԵՄ-ի կողմից պահանջվող օրենսդրական ներդաշնակեցմանն ուղղված հետագա քայլերը: http://ec.europa.eu/world/enp/docs/2012_enp_pack/armenia_memo_2011_en.pdf

7 http://www.aravot.am/2013/03/25/218958/

8 http://www.euadvisorygroup.eu/hy/node/240

Չնայած այդ ամենին, 2013 թ. օգոստոսի 28-ին, ՀՀ Կառավարությունը հայտարարեց, որ առաջարկելու է օրենքում կատարել հետեւյալ փոփոխությունը՝ «գենդեր» բառը, որը օրենքում սահմանված է որպես «տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք»[9], փոխարինել՝ «կանանց եւ տղամարդկանց միջեւ հավասար իրավունքներ» բառերով: Այս պահի դրությամբ օրենքը գործում է մայիսի շարադրմամբ, սակայն կարող է փոփոխությունների ենթարկվել:

Ըստ ամենայնի, օրենքում փոփոխություն անելու կառավարության մտադրությունը պայմանավորված է աննախադեպ «հակագենդերային» քարոզչությամբ, որը ծավալվել է մի շարք հասարակական խմբերի կողմից, այդ թվում «Ստոպ գենդեր[10]» նախաձեռնության շրջանակներում: Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում հայտնի հայկական հասարակական կազմակերպության՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի հավաստմամբ, ծայրահեղական խմբերը սկսեցին թյուր տեղեկություններ տարածել սոցիալական ցանցերում՝ Հայաստանում գործող կանանց հասարակական կազմակերպությունների եւ կանանց իրավունքների պաշտպանների դեմ: Հասարակությունում ատելություն եւ վախ տարածելու նպատակով այդ խմբերը աղավաղում են օրենքի ձեւակերպումները՝ գենդերային հավասարությունը կապելով նույնասեռականության եւ մանկապղծության քարոզչության հետ:

«Հակագենդերային» արշավի շրջանակներում «Համահայկական ծնողական կոմիտե» կազմակերպությունը կանանց իրավունքների պաշտպաններին անվանեց «ազգի դավաճաններ», «ընտանիք քայքայողներ», «սպառնալիք հայկական արժեքներին» եւ մեղադրեց երեխաների ու անչափահասների նկատմամբ սեռական բռնություններ կատարելու մեջ[11]: Այս եւ առցանց հարթությունում ատելության քարոզի տագնապահարույց այլ դեպքերի մասին (օրինակ՝ ԼԳԲՏ անձանց հետ կապված), հաղորդվել է նաեւ «Խոսքն առանց ատելության» շարժման Հայաստանի ֆեյսբուքյան էջում՝ հղում կատարելով Կանանց իրավունքների զարգացման ասոցիացիայի կայքում տեղադրված հոդվածին:[12]

Ինչպես հայտնի է, մարդու իրավունքները համընդհանուր են եւ անօտարելի, անբաժանելի, փոխպայմանավորված են եւ փոխկապակցված: Հետեւաբար, անհնար է վերլուծել երեխաների իրավունքների կամ կրոնական ազատությունների

9 http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4761&lang=arm
10 http://hanun.am/?page_id=82
11 http://www.youtube.com/watch?v=hGZxeWlanVc
12 www.awid.org/Library/Persecution-and-threats-towards-women-s-rights-defenders-and-threat-to-freedom-of-association-and-expression-in-Armenia

հետ կապված իրավիճակը երկրում մարդու իրավունքների ավելի լայն համատեքստից՝ քաղաքական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում տիրող իրավիճակից դուրս:

Նման գերզգայուն խնդիրն ուսումնասիրելիս, անհրաժեշտ է նաեւ ի նկատի ունենալ երկրի պատմական եւ մշակութային համատեքստը: Վստահ եմ, որ զուտ իրավական եւ առավել ձեւական մոտեցումը նման մարդաբանական խնդրին սխալ կլինի: Պետք է ընդունել, որ այլ Արեւելյան եւ Ուղղափառ եկեղեցիների նման Հայ Առաքելական Եկեղեցին եւս, իրապես, կարեւոր դերակատարում է ունեցել հայ ժողովրդի կյանքում, հատկապես Օսմանյան կայսրության օրոք: Դարեր շարունակ հայ լինելու եւ Հայ Առաքելական Եկեղեցու հոտի մաս լինելու հասկացությունները գրեթե միաձուլված են եղել, նախեւառաջ Կայսրության կրոնական-ազգային կառուցվածքից ելնելով[13]: Այդ ժառանգությունը, ինչպես նաեւ տարածաշրջանում չկարգավորված կոնֆլիկտների պատճառով արդի հայ հասարակությունում գոյություն ունեցող որոշակի անվստահության եւ ներքին անվտանգության բավականին օբյեկտիվ տագնապներն այն գործոններն են, որոնք հետազոտողը պետք է հաշվի առնի կրոնի, ազատությունների եւ ինքնության հետ կապված նուրբ խնդիրներն ուսումնասիրելիս:

[13] www.britannica.com/EBchecked/topic/382871/millet

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Վստահելի վիճակագրության, չխմբակցված (disagregated) տվյալների եւ խտրականության դեմ հատուկ օրենսդրության բացակայությունը միջազգային հանրության շատ լուրջ մտահոգության առարկա են: Թե՛ Եւրոպայի խորհրդի, եւ թե՛ ՄԱԿ-ի տարբեր կոմիտեների զեկույցներն ու հանձնարարականները պարունակում են վիճակագրական տվյալների եւ բազմազանության ապահովմանն ուղղված օրենսդրության ընդունման պարբերական պահանջներ, որոնք հիմնականում անպատասխան են մնում:

Եւրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական հանձնաժողովը Հայաստանի վերաբերյալ իր երրորդ զեկույցում (2010թ.) հստակորեն արձանագրում է, որ. «դեռեւս չի ընդունվել խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն, եւ այս բնագավառում չկան վիճակագրական վստահելի տվյալներ»[14]:

2000թ.-ին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտողություններում նշել է, որ. «Հանձնաժողովը մտահոգված է Կոնվենցիայով նախատեսված բոլոր ոլորտներում 18 տարեկանից ցածր անձանց վերաբերյալ չխմբակցված տվյալների, այդ թվում՝ ամենախոցելի խմբերի (մասնավորապես հաշմանդամ, ապօրինածին, անօթեւան, հակամարտության շփման գծի, գյուղական շրջանների, փախստական եւ փոքրամասնությունների խմբին պատկանող երեխաների) վերաբերյալ տվյալների հավաքագրման եւ վերլուծության մեխանիզմների բացակայությամբ»: Բնակչության կազմի վերաբերյալ ժողովրդագրական տվյալների, ինչպես նաեւ էթնիկ խմբերի սոցիալ-տնտեսական իրավիճակի, այդ թվում՝ գենդերային հեռանկարների վերաբերյալ տվյալների բացակայության շուրջ մտահոգություններն արտահայտվել են ՄԱԿ-ի մի շարք այլ փաստաթղթերում[15]:

Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ Եւրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ), որը ստեղծվել է Եւրոպայի խորհրդի կողմից, Հայաստանի վերաբերյալ իր չորրորդ զեկույցում (2011թ.) հայտարարել է. «Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել էր իշխանություններին իրականացնել զբաղվածության, բնակարանային ապահովվածության եւ կրթության բնագավառներում էթնիկ

[14] http://gov.am/u_files/file/kron/PDF_3rd_OP_Armenia_en.pdf

[15] Որպես օրինակ, տե՛ս, Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման հանձնաժողովի եզրափակիչ դիտողությունները, 2011 http://www.gov.am/u_files/file/kron/Armenia_AUV.pdf

փոքրամասնությունների իրավիճակի ուսումնասիրություն՝ գնահատելու եւ վերացնելու խտրականության հնարավոր դեպքերը»: ՌԱԵՀ-ն չի տեղեկացվել նման հետազոտության անցկացման վերաբերյալ»[16]:

Միջազգային ատյանների կողմից շարունակաբար արտահայտած մտահոգության մեկ այլ թեմա է հանդիսանում Հայաստանի իշխանությունների ոչ բավարար ցանկությունը ժամանակին եւ առանց վարանելու էթնիկ եւ կրոնական հիմքով խտրականության դրսեւորումներին հակադարձելու գործում:

Այս դիտարկման վառ օրինակներ կարող են ծառայել Հայաստանի կառավարության հաշվետու զեկույցները եւ վերոնշյալ մարմինների կողմից արտահայտված մտահոգությունները: Օրինակ՝ ստորեւ բերվում է Հայաստանի կառավարության արձագանքը՝ ի պատասխան ՌԱԵՀ-ի արտահայտված նկատառումների[17]:

«Խտրականության վերաբերյալ վիճակագրության բացակայության առումով ցանկանում ենք տեղեկացնել, որ խնդիրը պայմանավորված է ոչ թե վիճակագրության, այլ ավելի շուտ այնպիսի հանցագործությունների բացակայությամբ, որոնց դեպքում հնարավոր կլիներ որեւէ թիվ գրանցել: Երկրում քրեական գործունեության բոլոր դեպքերը գրանցվում են եւ դասակարգվում են համապատասխան կարգով, ներառյալ՝ հանցագործության տեսակը եւ ներգրավված անձանց էթնիկ ծագումը»:

Քրեական գործերի բացակայությունը, որպես խտրականության բացակայության ապացույց, մի թեզ է, որ շարունակաբար առաջ է քաշվում Հայաստանի իշխանությունների կողմից տարբեր փաստաթղթերում եւ ատյաններում, եւ որը առարկայական փաստարկ չի ճանաչվում միջազգային մոնիտորինգային մարմիններից եւ ոչ մեկի կողմից: Բերվող հակափաստարկն այն է, որ բողոքների բացակայությունը ինքնին չի վկայում հանցագործությունների բացակայության մասին, այլ կարող է պայմանավորված լինել բնակչության թյուր իրազեկվածության, ինչպես նաեւ դատարանների եւ իրավապահ մարմինների նկատմամբ վստահության ցածր մակարդակով:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից Հայաստանի վերաբերյալ վերջին Եզրափակիչ դիտողությունները, որոնք ընդունվել են 2012թ. հուլիսի 9-27-ը, արձանագրում են.

---

16 http://www.gov.am/u_files/file/kron/ECRI.pdf
17 http://gov.am/u_files/file/kron/PDF_3rd_Com_Armenia_en.pdf

«Հանձնաժողովը մտահոգված է խտրականության վերաբերյալ համապարփակ օրենսդրության բացակայությամբ: Մտահոգությունները վերաբերում են նաեւ ազգային եւ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բռնություններին, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների եւ գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից, ինչպես նաեւ ոստիկանության եւ դատական մարմինների կողմից ատելության հիմքով հանցագործությունները հետաքննելու, հետապնդելու եւ պատժելու ուղղությամբ անհրաժեշտ գործողությունները չկատարելուն (հոդվածներ 2, 18, 20, 26):

Մասնակից-պետությունը պետք է ապահովի, որ խտրականությանը տրված իր սահմանումն ընդգրկի Դաշնագրով սահմանված խտրականության բոլոր ձեւերը (ռասա, մաշկի գույն, սեռ, կրոն, քաղաքական կամ այլ համոզմունքներ, ազգային կամ սոցիալական ծագում, սեփականություն, ծնունդ կամ այլ կարգավիճակ): Բացի այդ, պետությունը պետք է պայքարի բռնության եւ ռասայական ու կրոնական ատելության հրահրման դեմ, փոքրամասնություններին տրամադրի պատշաճ պաշտպանություն, եւ նմանատիպ դեպքերում ապահովի համապատասխան հետաքննություն եւ հետապնդում: Ավելին, Հանձնաժողովը քաջալերում է մասնակից-պետությանը ամրապնդել իր ջանքերը ռասայական խտրականության դեմ ընդունված օրենքների արդյունավետ կիրառման եւ դրանցով սահմանված նպատակների իրականացումը ապահովելու համար »[18]:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ՀՀ Կառավարությունը, ինչպես նաեւ հասարակության լայն շրջանակները ազգային եւ կրոնական փոքրամասնությունների խնդիրները հրատապ չեն համարում: Թեման ուսումնասիրելիս տպավորություն է ստեղծվում, թե խնդիրը գոյություն ունի միայն մարդու իրավունքների վերաբերյալ կոնվենցիաների շուրջ միջազգային քննարկումներում: Շատ հաճախ հայերն իրենց երկիրը դիտարկում են որպես մոնոէթնիկ եւ միակրոն: Ըստ 2011թ. պետական մարդահամարի արդյունքների՝ բնակչության մոտ 98%-ն իրեն համարում է հայ եւ մոտ 92%-ը՝ Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդ[19]: Այնուամենայնիվ, չի կարելի անտեսել այն փաստը, որ Հայաստանում գոյություն ունի էթնիկ եւ կրոնական բազմազանություն՝ իր ինքնատիպ մշակույթով եւ ավանդույթներով:

Այս հետազոտությունը թեեւ չի հավակնում համապարփակ լինելուն, սակայն, անգամ այս փոքրամասշտաբ ծավալով, փաստում է այն, որ Հայաստանում էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների երեխաների հանդեպ որոշակի խտրական

[18] www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/co/CCPR.C.ARM.CO.2-3_AV.doc
[19] http://armstat.am/file/article/sv_03_13a_520.pdf

վերաբերմունք գոյություն ունի թե՛ պետության, եւ թե՛ հասարակության լայն շրջանակների կողմից: Անհանդուրժողականության դրսեւորումները հաճախ բազմապատկվում են ԶԼՄ-ների կողմից՝ խնդիրների ոչ պրոֆեսիոնալ կամ կանխակալ լուսաբանման արդյունքում:

ԵՐԵԽԱՆԵՐ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Լայնորեն ընդունված է, որ երեխաները եւ երիտասարդությունը հասարակության ամենախոցելի խմբերից են եւ կարիք ունեն հատուկ պաշտպանության: Ինչպես ամրագրված է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայում՝ «երեխա, նկատի ունենալով նրա ֆիզիկական եւ մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության եւ հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ եւ հետո[20]»: 2012թ. Եւրոպայի խորհուրդն ընդունեց Երեխաների իրավունքների պաշտպանության եւ խթանման նոր ռազմավարություն[21]՝ որպես հատուկ նպատակ ընտրելով երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձեւերի վերացումը, ինչպես նաեւ երեխաների մասնակցությունը որոշումների կայացմանը:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ) մասնակից երկրները, ներառյալ Հայաստանը, ստանձնում են կանխարգելիչ եւ նախաձեռնող բնույթի իրավական պարտավորություններ: Այսինքն, համեմատելով այսպես կոչված «բացասական» իրավունքների հետ, որոնք սովորաբար վերաբերվում են քաղաքացիական եւ քաղաքական ազատություններին, երեխայի իրավունքները նաեւ «դրական» են՝ հատկապես պարտավորեցնելով պետությանը իրականացնել դրանց ապահովման համար անհրաժեշտ սոցիալական եւ տնտեսական բնույթի միջոցառումներ: Այնպիսի աղքատ երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, սա ակնհայտորեն հավակնոտ նպատակ է:

Երեխայի իրավունքների եւ դավանանքի ազատության միջեւ փոխհարաբերությունների շուրջ դատողություններն ինքնին բավականին բարդ են: Նշեմ խնդիրներից երկուսը: Ակհայտ խնդիրներից մեկն այն է, որ չնայած ԵԻԿ-ի հոդված 14-ը կոչ է անում մասնակից պետություններին հարգել երեխայի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը, սակայն երեխաները, իրականում, հաճախ կախված են իրենց ծնողներից եւ համայնքներից: Երկրորդը, երեխաների իրավունքների լուրջ ոտնահարումներն են ոչ միայն պետությունների, այլեւ էթնիկ եւ կրոնական համայնքների ներսում: «Երեխաների նկատմամբ բռնությունների դեմ խորհուրդն» իր 2013թ.-ի «Խախտելով երեխաների իրավունքները. ավանդույթների, մշակույթի, կրոնի կամ սնահավատության վրա հիմնված վնասակար գործունեություն» զեկույցում մասնավորապես նշում է. «յուրաքանչյուր տարի ողջ աշխարհում հազարավոր երեխաներ են մահանում եւ միլիոնավոր երեխաների մանկության եւ

[20] http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf
[21] www.coe.int/t/dg3/children/StrategySept2012_en.pdf

զարգացման վրա բացասաբար են անդրադառնում ծնողների, հարազատների, կրոնական եւ համայնքային առաջնորդների եւ այլ չափահաս անձանց վնասակար գործունեությունը»[22]:

Այս հետազոտությունը ցույց է տալիս, որ այս երկու խնդիրները շատ կարեւոր են նաեւ Հայաստանի դեպքում: Երեխաների եւ երիտասարդության, հատկապես փոքրամասնություններին պատկանողների, ձայնը հազիվ-թե լսելի է: Այս հետազոտության բարձրացրած հարցերի մեծ մասին երիտասարդները պատասխան չունեին: Հետազոտության շրջանակներում հայտնաբերված խնդիրներից շատերը, ինչպիսիք վաղ ամուսնություններն են եւ դպրոց չհաճախելը, կապված են փոքրամասնական համայնքներում ավանդույթների կարծրության եւ երեխաների իրավունքների սահմանափակման խնդիրների հետ:

22 www.crin.org/docs/InCo_Report_15Oct.pdf

ԱՅՍ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս հետազոտության[23] նպատակն է ուսումնասիրել էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների երեխաների եւ երիտասարդների խնդիրներին վերաբերվող նյութերը, անդրադառնալով նրանց բարեկեցության եւ առօրյա կյանքի վրա անհանդուրժողականության եւ խտրականության հնարավոր ազդեցության հետեւանքներին: Ուսումնասիրությունը կատարվել է Եւրոպայի խորհրդի պատվերով:

ՌԱԵՀ-ը, օրինակ, առանձնացնում է երեք հիմնական խոցելի/ թիրախային խմբեր, որոնք ենթակա են ռասիզմի եւ անհանդուրժողականության դրսեւորումների: Դրանք են՝ էթնիկ փոքրամասնությունները, կրոնական փոքրամասնությունները եւ քաղաքացիություն չունեցող անձինք (փախստականներ, ապաստան հայցողներ եւ այլ քաղաքացիություն չունեցող անձինք):

Կարծում եմ, որ հաշվի առնելով Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմի արդյունքում, հիմնականում հայկական ծագմամբ, փախստականների եւ ապաստան հայցողների դեպի Հայաստան աճող հոսքը, օգտակար կլիներ ուսումնասիրել նաեւ քաղաքացիություն չունեցող անձանց, հատկապես երեխաների եւ երիտասարդների նկատմամբ խտրականության հնարավոր դրսեւորումները: Այնուամենայնիվ, քանի որ միգրացիոն գործընթացը դեռեւս ակտիվ փուլում է եւ գրեթե չկան հասանելի տվյալներ, ավելի ողջամիտ է ուշադրությունը սեւեռել նախեւառաջ էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների վրա: Այնուհանդերձ, վստահ եմ, որ քաղաքացիություն չունեցող անձանց, այդ թվում Սիրայից եւ Իրաքից փախստականների, ինչպես նաեւ ծագումով ոչ հայ ընտանիքների, օրինակ՝ իրանցիների եւ նրանց երեխաների, նկատմամբ խտրականության եւ անհանդուրժողականության հնարավոր խնդիրներին անդրադառնալու կարիք կլինի, թե՛ հետազոտական, եւ թե՛ ծրագրային մակարդակներում:

[23] Որպես այս հետազոտության մաս, փաստաթղթային ուսումնասիրությունից զատ մի շարք հանդիպումներ են կայացել ՀՀ Կառավարությանը կից Ազգային փոքրամասնությունների եւ կրոնական հարցերի վարչության ներկայացուցիչների, վարչության պետ Վարդան Ասատրյանի եւ փորձագետ Դավիթ Միքայելյանի, ԵՊՀ դասախոս եւ գիտաշխատող Հովհաննես Հովհաննիսյանի հետ, ինչպես նաեւ նամակագրական քննարկում է տեղի ունեցել Հարավային Կովկասում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի ներկայացուցիչ Վլադիմիր Շկոլնիկովի հետ:

Ուսումնասիրության ընթացքում ի հայտ են եկել խդիրների երեք հիմանական կատեգորիաներ, որտեղ կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների ընտանիքներից սերող երեխաների եւ դեռահասների իրավունքների ոտնահարումներն առավել ակնհայտ են:

ա) Ստիգմա[24] եւ սոցիալական մեկուսացում
բ) Խտրականություն կրթության ոլորտում
գ) Վաղ ամուսնություններ

[24] Քանի որ սոցիալական գիտություններում ավելի ընդունված է հունական ծագում ունեցող «ստիգմա» բառի գործածությունը, այս հետազոտության մեջ նույպես այն օգտագործվում է այդ կերպ. բառի հայերեն համարժեքն է՝ խարանը:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեեւ Հայաստանում թե՛ երեխաների իրավունքներին, եւ թե՛ կրոնական ազատություններին նվիրված բազմաթիվ հետազոտություններ գոյություն ունեն, այնուամենայնիվ, թվում է, թե մինչ այսօր հատուկ ուսումնասիրություն էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների եւ/կամ նրանց նկատմամբ խտրականության դրսեւորումների վերաբերյալ չի իրականացվել:

Հասարակական կազմակերպությունները բավականին մեծ դեր են խաղում մարդու իրավունքների եւ կրոնական ազատությունների հետ կապված խնդիրների վերաբերյալ համակողմանի ուսումնասիրություններ իրականացնելու գործում: Այսպես, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի կողմից իրականացված «***Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում***»[25] եւ «Կրոնական խնդիրների լուսաբանումը Հայաստանի ԶԼՄ-ներում»[26] ուսումնասիրություններում ամփոփվել են Հայաստանում կրոնական հանդուրժողականությանը վերաբերող բազմաթիվ փաստարկներ[27]: Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից իրականացված «Կրոնի ազատությունը Հայաստանում» ուսումնասիրությունը մանրամասնորեն անդրադառնում է Հայաստանում գործող կրոնական կազմակերպություններին եւ նրանց նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքին[28]: Եւրասիա համագործակցություն հիմնադրամը պատվիրել էր երկու ուսումնասիրություն՝ լրատվամիջոցների մոնիտորինգային ուսումնասիրություն, որը իրականացվել է Երեւանի մամուլի ակումբի կողմից, իսկ ԵՊՀ դասախոսներ Հովհաննես Հովհաննիսյանը եւ Լուսինե Քարամյանն իրականացրել «Հանդուրժողականությունը Հայաստանում այսօր. Կրոնական հանդուրժողականության հեռանկարները» որակական հետազոտությունը:

Հայաստանում կատարվել են նաեւ երիտասարդության իրավիճակն ուսումնասիրող մի շարք հետազոտություններ: Հետաքրքիր են «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը»[29] (2011թ.), «Հայաստանի երիտասարդների ձգտումներն ու ակնկալիքները»[30] զեկույցը (2012թ.) եւ 2013-2017թթ. ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը (2012թ.)[31]: Նախկինում իրականացված նմանատիպ մի շարք ուսումնասիրություններ, օրինակ՝

---

25 http://www.religions.am/files/1706/pastathter/ps1.pdf

26 http://www.religions.am/files/3247/documents/comments/p13.pdf

27 «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի այլ նյութերը հասանելի են www.religions.am կայքում

28 http://armhels.com/wp-content/uploads/2012/06/1071arm-Kroni_Azatutyune_Hayastanum.pdf

29 www.erit.am/pdf_fayler/book_zekujc.pdf

30 www.erit.am/pdf_fayler/Bnakaranashinutyun/HH%20eritasardneri%20dzgtumner.pdf

31 www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/12/12_1693.pdf

«Երիտասարդական քաղաքականության եւ երիտասարդական աշխատանքի վերլուծությունը»[32], պատրաստված հայ փորձագետների կողմից Եւրոպայի խորհրդի եւ Եւրոպական հանձնաժողովի համատեղ նախաձեռնության շրջանակներում (վերանայվել է 2011թ.) եւ «Հայաստանում երիտասարդական քաղաքականությունը», մշակված որպես 2009թ.-ին Եւրոպայի խորհրդի երիտասարդական ազգային քաղաքականությունների 13-րդ հետազոտության[33] մի մաս, եւս հասանելի են համացանցում:

Սակայն, ցավոք, այս բոլոր ուսումնասիրությունները եւ զեկույցները, ներառյալ վերոհիշյալ Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը եւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը»[34] (2012թ.), ըստ էության, չեն արտացոլում էթնիկ կամ կրոնական փոքրամասնություններ ներկայացնող դեռահասների եւ երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակը: Փոքրամասնությունները գրեթե ամբողջովին անտեսված են «Հայաստանի երիտասարդների ձգտումներն ու ակնկալիքները» զեկույցում, իսկ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը» բավականին վիճահարույց կերպով է անդրադարձ կատարում այդ հարցին: Միայն «Երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում» ուսումնասիրությունը, որը մշակվել է օտարերկրյա փորձագետների կողմից Եւրոպայի խորհրդի նախաձեռնությունների շրջանակներում, համառոտ կերպով անդրադարձել է խնդրին՝

«Քաղաքացիական եւ քաղաքական մասնակցությունն Ազգային զեկույցի էական հարցերից է (Գլուխ VI), սակայն անկախ ասվածից, կան խնդիրներ, որոնք չեն լուսաբանվել: Չնայած Հայաստանի Հանրապետությունում ծնված յուրաքանչյուր ոք ստանում է քաղաքացիություն, բայց երիտասարդության որոշակի խմբերի, օրինակ՝ հեռավոր գյուղական շրջաններում բնակվողների, փախստականների ու ներքին տեղահանված անձանց, փոքրաքանակ ազգային փոքրամասնությունների մասնակցության հնարավորությունների հետ կապված առանցքային հարցեր են առաջանում»[35]:

Միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պարբերական հաշվետվությունները կարող են դիտարկվել, որպես փաստաթղթային հետազոտության կարեւոր կատեգորիա:

---

32 http://youth-partnership-eu.coe.int/youth-partnership/documents/EECA/Reviews_on_youth_policies_SEE_EECA_Armenia_2011.pdf
33 http://www.coe.int/t/dg4/youth/Source/IG_Coop/YP_Armenia_en.pdf
34 http://www.ombuds.am/pages/downloadPdf/file_id/1684
35 www.coe.int/t/dg4/youth/Source/IG_Coop/YP_Armenia_en.pdf

Հայաստանը ստորագրել է մարդու իրավունքների ոլորտը կարգավորող զգալի թվով միջազգային կոնվենցիաներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման, այդ թվում Մարդու իրավունքների Եւրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ): Երեխաների, երիտասարդների եւ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում կարեւոր եւ գործածական են ՄԻԵԿ-ը, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան (ԵԻԿ) եւ Եւրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան: Հայաստանի կառավարությունը պարտավոր է պարբերական հաշվետվություններ ներկայացնել ՄԱԿ-ի պայմանագրային եւ Եւրոպայի խորհրդի մոնիտորինգային մարմիններին, որոնցից է Շրջանակային կոնվենցիայի իրականացման խորհրդատվական հանձնաժողովը: Հետեւաբար, այս հետազոտության մեջ բավականին շատ հղումներ են կատարվում նշված Կոնվենցիաներին, Հայաստանի Հանրապետության զեկույցներին մոնիտորինգային հանձնաժողովներին եւ հանձնաժողովների նակատառումներին, հատկապես՝ Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ Եւրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) կողմից արտահայտած մտահոգություններին եւ տեսակետներին:

Կոնկրետ դեպքերի վերլուծությունները, ինչպես նաեւ ԶԼՄ-ներում տեղ գտած հրապարակումները արժեքավոր են ցանկացած հետազոտության համար, եւ այս ուսումնասիրության շրջանակներում եւս ընդգրկվել են՝ ըստ հնարավորության: Օգտագործված ուսումնասիրությունների, հարցումների եւ այլ փաստաթղթերի ամբողջական ցանկը ներառված է հավելվածում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Կրոնի ազատության վերաբերյալ Հայաստանի օրենսդրության եւ վավերացրած միջազգային կոնվենցիաների լուրջ, մանրակրկիտ վերլուծություններ են կատարվել Հայաստանի Հելսինկյան կոմիտեի եւ Համագործակցություն հանուն ժողովրդավարության հասարակական կազմակերպությունների կողմից: Սույն հարցերի շուրջ մի շարք հրամայականներ ձեւակերպվել են նաեւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ՄԱԿ-ի տարբեր հանձնաժողովների, Եւրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի, Եւրոպական հանձնաժողովի եւ այլ մարմինների կողմից:

Թեմային վերաբերվող ՀՀ օենսդրության համապարփակ վերլուծությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի «Կրոնի ազատությունը Հայաստանում» ուսումնասիրության 2-րդ գլխում[36] (էջ 14-27) եւ Համագործակցություն հանուն ժողովրդավարության ՀԿ-ի «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» ուսումնասիրության 3-րդ գլխում (էջ 38-58)[37]:

Ազգային ժողովի կողմից 1991թ.-ին ընդունված «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաեւ «Այլընտրանքային զինվորական ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության եւ Հայ Առաքելական Եկեղեցու միջեւ հարաբերությունների մասին» եւ «Կրթության մասին» ՀՀ օրենքները քննադատության հիմնական թիրախներն են: Ուսումնասիրությունները փաստում են, որ բովանդակային խնդիրներից զատ, օրենքների միջեւ կան նաեւ հակասություններ: Օրինակ՝ «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» ուսումնասիրության մեջ արծարծված է մի խնդիր, որը նաեւ ուղղակիորեն վերաբերվում է մեր հետազոտության թեմային.

[36] http://armhels.com/wp-content/uploads/2012/06/344eng-Freedom_of_Religion_in_Armenia.pdf
[37] www.religions.am/files/1577/english/library/Religious-tolerance-in-Armenia.pdf

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (ե) կետը սահմանում է. ***«Մինչեւ 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից»***: Սակայն, սա հակասում է ՀՀ այլ օրենքների, մասնավորապես, «Երեխաների իրավունքների մասին» օրենքին, որի 10-րդ հոդվածը (երեխայի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը) արգելում է 16 տարեկանից ցածր երեխաների մասնակցությունը կրոնական կազմակերպություններին, առանց ծնողի կամ այլ իրավական ներկայացուցչի նախնական համաձայնության: Բացի այդ, ***«Մինչեւ 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից»*** սահմանումը հակասում է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածին (1989թ.):

ԱՄՆ կառավարության 2012թ. Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցում[38] ներկայացվում է այլ հարցերի շուրջ հակիրճ եւ հստակ նկարագրություն՝

Սահմանադրությունը եւ օրենսդրությունը սահմանում են եկեղեցու եւ պետության տարանջատումը, սակայն ճանաչում են «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»: Օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար: Օրինակ՝ եկեղեցին կարող է ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, եւ ազատազրկման վայրերում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի խնդրանք լինելու դեպքում: Օրենքն արգելում է «հոգեորսությունը», սակայն չի սահմանում «հոգեորսություն» եզրույթը, որն օգտագործվում է բնութագրելու թե' դավանափոխությունը, եւ թե' հարկադիր կրոնափոխությունը: Արգելքը վերաբերում է բոլոր կրոնական խմբերին, այդ թվում եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

[38] http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/irfr2012_arm.pdf

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (ե) կետը սահմանում է. «Մինչեւ 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից»: Սակայն, սա հակասում է ՀՀ այլ օրենքների, մասնավորապես, «Երեխաների իրավունքների մասին» օրենքին, որի 10-րդ հոդվածը (երեխայի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը) արգելում է 16 տարեկանից ցածր երեխաների մասնակցությունը կրոնական կազմակերպություններին, առանց ծնողի կամ այլ իրավական ներկայացուցչի նախնական համաձայնության: Բացի այդ, «Մինչեւ 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից» սահմանումը հակասում է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածին (1989թ.):

Այս թեմայով վերջին հրապարակումից ի վեր շատ քիչ օրենսդրական ակտեր են փոխոխության կամ լրամշակման ենթարկվել: Սակայն, այստեղ անհրաժեշտ է առանձնահատուկ կերպով նշել «Այլընտրանքային զինծառայության մասին» օրենքում 2013թ. մայիսին կատարված փոփոխությունները, որոնց շնորհիվ կրոնական համոզմունքներից ելնելով զինծառայությունը մերժող երիտասարդները վերջապես կկարողանան քաղաքացիական, աշխատանքային ծառայության անցնել զինված ուժերին չենթարկվող հաստատություններում: Փոփոխությունները կատարվեցին միջազգային հանրության երկարամյա ճնշման ներքո, ինչպես նաեւ Մարդու իրավունքների Եւրոպական դատարանի հանրահայտ ***Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության*** [Bayatyan vs. Armenia] գործով վճռի արդյունքում[39]: Խնդրի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կարելի է քաղել Ֆորում 18[40] հասարակական կազմակերպության լրատվական կայքից, որը մշտադիտարկում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածի ոտնահարումն դեպքերը հետխորհրդային մի շարք երկրներում:

Ցավոք սրտի, չնայած հայաստանյան քաղաքացիական հասարակության եւ միջազգային հանրության բազմաթիվ նկատառումներին եւ առաջարկություններին, «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը լրամշակումների եւ փոփոխությունների չի ենթարվել եւ «Հայոց Առաքելական Եկեղեցու պատմություն» առարկան մնում է պարտադիր բոլոր հանրակրթական դպրոցներում, բոլոր երեխաների համար:

---

39 http://www.lawgroup.am/?option=com_content&view=article&id=37&Itemid=43

40 www.forum18.org/archive.php?article_id=1844

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի կառավարության կողմից հրապարակված կրոնական կազմակերպությունների ցանկի համաձայն՝ Հայաստանում գրանցված է 65 կազմակերպություն: Գոյություն ունեն նաեւ մի շարք կազմակերպություններ, որոնք դեռեւս չեն ապահովել գրանցման գործընթացները, սակայն գործում են երկրում: Ազգային փոքրամասնությունների խմբերը գրանցվում են առանձին, որպես հասարակական կազմակերպություններ: Դրանց ցանկը հասանելի է ՀՀ կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների եւ կրոնական հարցերի վարչության կայքում՝http://gov.am/am/religion/:

Ի դեպ, Հայաստանում գրանցված կրոնական խմբերի թիվը, ազգային փոքրամասնությունների կրոններից զատ, ինչպիսիք են եզդիները կամ մոլոկանները, մոտ 15 է: Գրանցված կրոնական կազմակերպությունների ցանկն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ նույն խումբը ներկայացնող կրոնական կազմակերպությունները շատ դեպքերում գրանցված են որպես առանձին իրավաբանական անձինք:

Աղյուսակ 1-ը ներկայացնում է, ՀՀ կրոնական փոքրամասնությունների պատկերը ըստ 2011թ. մարդահամարի[41] տվյալների: Ամենամոտավոր հաշվարկների համաձայն՝ 0-18 տարեկան երեխաները, որոնք Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ չեն, մոտ 30,500 են:

[41] http://armstat.am/file/article/sv_03_13a_520.pdf

Աղյուսակ 1

	Ընդամենը	Տարիք						
		0-9	10-19	20-29	30-39	40-49	50-59	60+
ԸՆԴԱՄԵՆԸ	3 018 854	387 501	411 712	564 163	410 426	388 024	412 290	444 738
Ծանկացած կրոնի կամ դավանանքի հետևորդների ընդհանուր թիվը	2 897 267	375 265	398 012	540 832	392 414	371 348	394 252	425 144
Որոնցից								
Հայ առաքելական	2 797 187	360 977	381 862	523 025	378 603	358 325	382 179	412 216
Կաթոլիկ	13 996	1 767	2 104	2 629	1 741	1 893	1 772	2 090
Ուղղափառ	7 587	607	642	1 087	1 067	945	1 119	2 120
Նեստորյան	1 733	208	237	367	202	244	252	223
Ավետարանչական	29 280	4 599	5 217	4 833	3 982	3 615	3 620	3 414
Եհովայի վկա	8 695	720	1 179	1 336	1 326	1 341	1 278	1 515
Բողոքական	773	105	116	129	105	107	98	113
Մորմոն	241	29	35	43	24	29	40	41
Մոլոկան	2 874	461	504	523	356	335	314	381
Շար-Ֆադին	23 374	3 949	4 197	4 591	3 404	3 139	2 242	1 852
Հեթանոս	5 416	967	987	1 000	747	666	574	475
Մահմեդականներ	812	78	87	250	153	103	81	60
Այլ	5 299	798	845	1 019	704	606	683	644
Իրենց որևէ կրոնի կամ դավանանքի հետևորդ չհամարող	34 373	4 349	4 203	5 484	4 312	4 148	4 834	7 043
Հրաժարվել են պատասխանել	10 941	1 304	1 544	2 011	1 518	1 376	1 540	1 648
Չեն նշել	76 273	6 583	7 953	15 836	12 182	11 152	11 664	10 903

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս մարդահամարի արդյունքները, որոնք արտացոլում են Հայաստանի բնակչության ազգային կազմը:

Աղյուսակ 2

Ազգություն	Ընդամենը	Տարիք						
		0-9	10-19	20-29	30-39	40-49	50-59	60+
ԸՆԴԱՄԵՆԸ	3 018 854	387 501	411 712	564 163	410 426	388 024	412 290	444 738
Հայեր	2 961 514	379 090	403 224	553 922	402 401	380 811	405 634	436 432
Եզդիներ	35 272	5 984	6 230	6 781	5 193	4 639	3 617	2 828
Ռուսներ	11 862	1 159	1 087	1 669	1 471	1 296	1 733	3 447
Ասորիներ	2 769	371	374	514	331	320	394	465
Հույներ	900	79	71	112	121	100	121	296
Ուկրաինացիներ	1 176	65	55	101	131	167	199	458
Քրդեր	2 131	430	370	389	293	253	196	200
Վրացիներ	974	104	101	149	152	113	138	217
Այլ	2156	207	191	502	320	308	244	384
Հրաժարվել են պատասխանել	100	12	9	24	13	17	14	11

Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններն (ՀՌԿԿ) իրականացնում են «Կովկասյան բարոմետր» հետազոտական ծրագիրը, որը նախատեսում է տարածաշրջանի մասին ամենամյա տվյալների հավաքագրում 2004թ.-ից ի վեր: Եթե 2004թ. հետազոտությունն անցկացվել է միայն հարավկովկասյան հանրապետությունների մայրաքաղաքներում, իսկ 2005թ.-ին յուրաքանչյուր երկրի մայրաքաղաքներից բացի՝ ընդգրկել նաեւ մեկական շրջան, ապա 2006թ. հետո այն եղել է համազգային՝ ներառելով ինչպես նշված երկրների մայրաքաղաքները, այնպես էլ մյուս քաղաքային եւ գյուղական բնակավայրերը[42]: Հետազոտության եւ վերլուծության համար երեք կենտրոնների կողմից կիրառվում է նույնական մեթոդաբանություն: Հայկական ընտրանքն ընդգրկում է մոտ 2,000 տնային տնտեսություն:

Ստորեւ ներկայացված է էթնիկ պատկանելության եւ բնակության վայրերի վերաբերյալ տվյալների խաչաձեւ աղյուսակը: Սակայն, ելնելով «Բարոմետրի» տարածաշրջանային բնույթից, այստեղ եւս հստակ նշված չեն առանձնահատուկ էթնիկ խմբեր կամ կոնկրետ բնակավայրեր:

[42] http://crrc.am/research-and-surveys/caucasus-barometer?lang=hy

Աղյուսակ 3



Երկրորդ խաչաձեւ աղյուսակը ցույց է տալիս հարցման մասնակիցների կրոնական պատկանելությունը: Այստեղ նույնպես խնդիր է առաջանում կրոնական խմբերի բազմազանության եւ աշխարհագրական հստակության հետ:

Աղյուսակ 4



ՀՌԿԿ-ի տվյալները բաց են եւ հասանելի համացանցում, ուստի հնարավոր է իրականացնել խաչաձեւ ամփոփում նաեւ ըստ սեռի եւ կրթության:

ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի եւ Եւրասիա համագործակցություն հիմնադրամի իրականացրած հետազոտությունների շրջանակներում զգալի թվով խորքային հարցազրույցներ եւ խմբային քննարկումներ են տեղի ունեցել ամենատարբեր կրոնական խմբերի ներկայացուցիչների, այդ թվում՝ Հայ Առաքելական Եկեղեցու (ՀԱԵ) սպասավորների հետ: Իրարից անկախ իրականացված այս երկու հետազոտությունները, մեծ թվով ընդհանուր միտումներ են բացահայտում: Ըստ հետազոտողների, թե՛ հոգեւորականները, եւ թե՛ մարդիկ ընդհանրապես, շատ ավելի հանդուրժող են այսպես կոչված «ավանդական» կրոնների՝ քրիստոնեության կաթոլիկ եւ ուղղափառ ուղղությունների հանդեպ, քան «նոր կրոնական խմբերի» կամ «աղանդավորների» նկատմամբ: Եւրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից իրականացված ուսումնասիրությունը, ինչպես նաեւ այլ զեկույցներ, փաստում է, որ ամենաանհանդուժողական վերաբերմունքը հայ հասարակությունը տածում է «Եհովայի վկաներ» կազմակերպության հանդեպ:

Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր հովիվներ տեր Կյուրեղ քահանա Տալյանի եւ տեր Ղազար քահանա Պետրոսյանի դիրքորոշումն է՝ «հայ մարդը պետք է ունենա մեկ մայր, որը Հայ Առաքելական սուրբ Եկեղեցին է»: Նման մոտեցումը, ինչպես արդեն նշվել է, հատուկ է ավանդական հին քրիստոնեական եկեղեցիներին, որոնք «աղանդ» են համարում ցանկացած կրոնական խումբ, որը շեղվում է պատմական հավատամքից: Սակայն նույնիսկ նման մերժողական դիրքորոշման մեջ նկատվում է յուրահատուկ վերաբերմունք յուրաքանչյուր կրոնական կազմակերպության նկատմամբ[43]:

Կրոնական հանդուրժողականության հեռանկարներին նվիրված, ԵՀՀ-ի պատվերով իրականացված հետազոտության համաձայն՝ «Հայ Եկեղեցու հոգեւորականներից շատերը տարբերակված մոտեցում ունեն կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Դրանց մի մասը համարվում է միանգամայն անընդունելի, որոնց շարքին են դասվում Եհովայի վկաները, երբեմն մորմոններն ու ավետարանական հարանվանությունները, իսկ ընդունելի կրոնական կազմակերպությունները հիմնականում ավանդական կրոններն են, հատկապես կաթոլիկները, ու այն եկեղեցիները, որոնք ակտիվ քարոզչությամբ չեն զբաղված ու չեն հավակնում Հայ Եկեղեցու հոգեւոր հոտին: Հայ Եկեղեցու հոգեւորականներից շատերի վերաբերմունքը ձեւավորվում է հայի ինքնության եկեղեցական ընկալումից, համաձայն որի «հայը միայն Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդն է» կամ էլ «մեկ ազգ, մեկ եկեղեցի» թեզի քարոզչությունը տարբեր պահպանողական խմբերի ու եկեղեցամերձ շրջանակների կողմից»:

[43] http://armhels.com/wp-content/uploads/2012/06/1071arm-Kroni_Azatutyune_Hayastanum.pdf

2011թ.-ին ՀՀ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից լույս ընծայված Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը խորհելու հետաքրքիր նյութ է տալիս ինչպես բովանդակության, այնպես էլ օգտագործված բառապաշարի տեսանկյունից: Զեկույցի «Ո՞վ է հայը» ենթաբաժնում հարցման մասնակիցների 88.6%-ն հայ լինելու «հատկանիշ» (զեկույցում օգտագործված եզր) է համարում ՀԱԵ հետեւորդ լինելը: Պատասխանելով «կընդունեիք, եթե Ձեր եղբայրը/քույրը, տղան/աղջիկը ամուսնանար...» հարցին, երիտասարդները «աղանդավոր հայերին» (ինչպես զեկույցում է) դասեցին սեւամորթներից ցածր եւ մի քիչ առավել, քան թուրքերը եւ մուսուլմանները:

Աղյուսակ 5



Ըստ զեկույցի հեղինակների «Այսպիսով՝ տվյալներից բխող առավել ընդհանուր եւ, հավանաբար, առավել կարեւոր եզրակացությունն այն է, որ Հայաստանի երիտասարդության համար այլ ազգերի ներկայացուցիչների հետ սոցիալական շփումները կարող են ավելի ընդունելի լինել, քան հայերի էթնոմշակութային խմբերի ներկայացուցիչների հետ:»[44]:

Վերոնշյալ նկատառումը որոշ չափով ապացուցում է նաեւ ՀՌԿԿ 2012թ. Կովկասյան բարոմետրը:

Աղյուսակ 6



44 www.erit.am/pdf_fayler/book_zekujc.pdf

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԶԼՄ-ների եւ հատկապես հեռուստատեսության դերը հանրային ընկալումների ձեւավորման վրա դժվար է գերագնահատել: 2008-2010թթ. եւ 2011թ.-ին ՀՌՌԿ Հայաստանի[45] կողմից իրականացված ԶԼՄ-ների վերաբերյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ չնայած համացանցի արագնթաց զարգացմանը, մարդիկ այնուամենայնիվ դեռեւս տեղեկատվության հիմնական աղբյուր են համարում հեռուստատեսությունը:

Աղյուսակ 7



2001-2009թթ. ժամանակահատվածի համար Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից 2010-ին իրականացված լրատվության բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ԶԼՄ-ներն ավելի դրական են արտահայտվել Հայ Առաքելական Եկեղեցու վերաբերյալ, իսկ այլ կրոնական դավանանքների նկատմամբ՝ ավելի շուտ չեզոք կամ բացասական (տե՛ս, գլուխ 3, էջեր 29-39):

[45] www.crrc.am/research-and-surveys/completed-projects/alternative-resources-in-media?lang=en

«Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ «դրական» կամ «չեզոք» են հրապարակումների 31,1%-ը, իսկ «բացասական»՝ 2,3%-ը: Ոչ Առաքելական կրոնական կազմակերպությունների նկատմամբ «բացասական» է հրապարակումների 33,5%-ը եւ «դրական» կամ «չեզոք» է 33,1%-ը: Ոչ Առաքելական կրոնական կազմակերպությունների նկատմամբ «չեզոք» հրապարակումների ճնշող մասը՝ 29%-ը, ուղղակի չեզոք լրատվություն է, իսկ 2%-ը այն հրապարակումներն են, որոնք հիմք ընդունելով խղճի ազատությունը, ներկայացնում են կրոնական կազմակերպությունների հետեւորդների իրավունքների խախտումները»:[46] Զեկույցում ընդգրկվել են կոնկրետ օրինակներ տարբեր լրատվամիջոցներից:

Համագործակցություն հանուն ժողովրդավարության ՀԿ-ի «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» ուսումնասիրությունը նույնպես անդրադառնում է լրատվամիջոցներին եւ իր ուշադրությունը սեւեռում կոնկրետ լրատվամիջոցների հրապարակումների վրա: Հեղինակները ենթադրում են, որ ԶԼՄ-ները չափազանց ուժեղ դերակատարում ունեն կրոնական փոքրամասնությունների եւ, հատկապես, Եհովայի վկաների վերաբերյալ բացասական կարծրատիպերի ձեւավորման գործում:

Երեւանի մամուլի ակումբը[47] մոնիտորինգի է ենթարկել 2011թ. նոյեմբերի 18-ից մինչեւ 2012թ. հուլիսի 25-ն ընկած ժամանակահատվածում ԶԼՄ-ների կողմից կրոնական խնդիրների լուսաբանումը: Ուսումնասիրված լրատվական նյութերի ծավալն ընդգրկում է 1,020 նյութ, որոնք այս կամ այն կերպ վերաբերվել են կրոնական խնդիրներին, սակայն դրանցից միայն 96-ն է (ավելի քիչ, քան 10%-ը) պարունակում ցանկացած կրոնի, կրոնական դավանանքի կամ կրոնական համայնքների վերաբերյալ արժեքային համոզմունքներ եւ կարծրատիպեր: Մի կողմից, այս թիվը վկայում է կրոնական խնդիրների վերաբերյալ հայկական ԶԼՄ-ների հարաբերական չեզոք դիրքորոշման մասին: Մյուս կողմից էլ, քիչ են այն տեսանյութերը կամ նյութերը, որոնք դրական տեղեկություններ են տրամադրում կամ դրական պատկերացումներ ստեղծում կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ:

---

46 http://armhels.com/wp-content/uploads/2012/06/1071arm-Kroni_Azatutyune_Hayastanum.pdf

47 Այս հետազոտության վերաբերյալ որոշ հղումներին կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://www.epfound.am/files/tolerance_in_armenia_occasional_policy_brief.pdf

I. ՍՏԻԳՄԱ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

Այս գլխում ներկայացված փաստարկները վկայում են այն մասին, որ երեխաները, որոնք սերում են էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների ընտանիքներից, հաճախ կրկնակի սոցիալական մեկուսացման են ենթարկվում, առաջին հերթին, աղքատության եւ «աղանդավորական» պիտակավորման պատճառով:

«Սոցիալական մեկուսացում» հասկացությունը սերտորեն կապված է սոցիալական բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների եւ «աղքատության» հասկացությունների հետ: Սոցիալական մեկուսացում եզրը, իր ժամանակակից մեկնաբանմամբ, առաջ է քաշվել 1974թ.-ին, Ֆրանսիական Գոլիստական կառավարության սոցիալական հարցերի պետական քարտուղար Ռենե Լենուարի կողմից: Հետեւելով Ֆրանսիայում Ռենե Լենուարի քաղաքական նախաձեռնությանը՝ սոցիալական մեկուսացման գաղափարը շատ արագ եւ ոգեւորությամբ ընդունվեց Եւրոպական միության (ԵՄ) ողջ տարածքում՝ առաջացնելով աղքատության շուրջ լուրջ քննարկումներ: Եւրոպայում «սոցիալական մեկուսացում» եզրույթի նկատմամբ հետաքրքրությունը աճեց ԵՄ-ի աղքատության դեմ ծրագրերի քննարկումների շնորհիվ: Առաջին ծրագրից (1975-80թթ.) սկսած մինչեւ երրորդ ծրագիրը (1990-94թթ.) սոցիալական խնդրի անվանումը «աղքատությունից» վերափոխվեց «մեկուսացման»[48]:

Համաձայն ժամանակակից, ոչ տնտեսագիտական սահմանումներից մեկի աղքատությունը համայնքի տնտեսական, քաղաքական եւ մշակութային կյանքին մասնակցելու հնարավորություններից զրկված կամ մեկուսացած լինելն է: Ստորեւ բերվում է ՅՈՒՆԵՍԿՈի գլխավոր տնօրենի սոցիալական եւ հումանիտար գիտությունների հարցերով նախկին օգնական Պիեռ Սանեի խոսքը.[49]

Այսօր լայնորեն ընդունված է, որ չի կարելի դիտարկել աղքատության միայն տնտեսական կողմը: Աղքատությունը նաեւ սոցիալական, քաղաքական եւ մշակութային երեւույթ է: Ավելին, համարվում է, որ այն վտանգում է մարդու իրավունքները հետեւյալ առումներով՝ տնտեսական (աշխատանքի եւ համարժեք եկամուտ ստանալու իրավունք), սոցիալական (առողջապահության եւ կրթության մատչելիություն), քաղաքական (մտքի, խոսքի եւ միավորումների ազատություն) եւ մշակութային (մշակութային ինքնության պահպանման եւ համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք):

---

48 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, «Սոցիալական մեկուսացման իմաստը, չափումը, փորձը եւ առողջապահության բնագավառում ոչ հավասար հնարավորությունների հետ կապը. առկա գրականության վերլուծություն» www.who.int/social_determinants/media/sekn_meaning_measurement_experience_2008.pdf.pdf

49 Պիեռ Սանե, MOST տեղեկագիր, թիվ 10, 2001թ.

Հայաստանում աղքատության վերաբերյալ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, այդ թվում՝ 2008-2009թթ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը իրականացրել է երեխաների աղքատության վերաբերյալ լուրջ վերլուծություն: Փաստաթուղթը հիմնվում է 2008թ.-ի Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության վրա: Քանի որ երեխաների աղքատության մակարդակը որեւէ հատուկ չափանիշով չի գնահատվում, փաստաթղթում աղքատության վերլուծությունը կատարվում է չափանիշ ընդունելով սպառումը, նյութական եւ բնակարանային չքավորության մակարդակը, ինչպես նաեւ սրանց մասնակի համադրությունը:[50]

Չնայած այն փաստին, որ համակցված տվյալների բացակայության պատճառով անհնարին է տեսնել, թե որքանով է աղքատությունն ուղղակիորեն ազդել մեր խնդրո առարկա երեխաների վրա, այնուամենայնիվ կան մի քանի ցուցանիշներ, որոնք անուղղակի կերպով են վկայում այդ մասին:

Ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի վերոնշյալ ուսումնասիրության, այն ընտանիքները, որտեղ ծնողների կրթական ցենզը միջնակարգ կամ ավելի ցածր է, ինչպես նաեւ բազմազավակ ընտանիքները (2 կամ ավելի երեխա) երեխաների աղքատության տեսակետից ամենառիսկայինների շարքում են: Այս երկու գործոնները հատկանշական են փոքրամասնությունների, հատկապես եզդիների եւ մոլոկանների դեպքում:

2011թ.-ին Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակեց «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը»[51] չափազանց տագնապալի մի ուսումնասիրություն, ըստ որի Հայաստանում ավելի քան 300,000 երեխա կամ ընդհանուր թվի 41.4%-ն ապրում է աղքատության մեջ՝ ի համեմատություն չափահասների 35.8%-ի: Ավելին, առավել, քան 27,000 երեխա կամ ընդհանուր թվի 3.7%-ը ապրում է ծայրահեղ աղքատության մեջ: Մանուկները, որոնք ապրում են չորս կամ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներում, ամենաաղքատն են: Այս ընտանիքների շրջանում աղքատության ընդհանուր մակարդակը մոտ 71% է, մինչդեռ ծայրահեղ աղքատության մակարդակը 26.4%[52] է: Մեջբերելով Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հենրիետ Արենսին, հնարավոր է եզրակացնել, որ Հայաստանում երեխաները «աղքատների մեջ ամենաաղքատն են»:

---

50 ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Երեխաների աղքատությունը Հայաստանում, 2009թ. www.un.am/res/Library/UNICEF%20Publications/UNICEF_19_eng_pdf.pdf

51 www.armstat.am/en/?nid=82&id=1301

52 http://www.a1plus.am/52846.html

Ինչ վերաբերում է քաղաքացիական եւ մշակութային մասնակցությանը, ըստ ՀՌԿԿ-ի Սոցիալական համերաշխության հետազոտության, որը պատվիրել էր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը 2011թ., ընդհանուր առմամբ, Հայաստանում հասարակական մասնակցության մակարդակը բավականին ցածր է: Հետազոտությունը նաեւ ցույց է տալիս, որ հայաստանցիներից քչերը հնարավորություն ունեն մասնակցելու մշակութային իրադարձություններին:[53]

Աղյուսակ 8



Ի լրումն աղքատության ընդհանուր մակարդակին եւ սոցիալական մեկուսացմանը, ինչը փոքրամասնություններին պատկանող ընտանիքների երեխաները, ըստ էության, կիսում են այլ երեխաների հետ (հավանաբար անհրաժեշտ է իրականացնել հատուկ ուսումնասիրություն հասկանալու համար, թե որքանով է այդ իրավիճակը ավելի շատ ազդում հատկապես փոքրամասնությանը պատկանող ընտանիքների երեխաների վրա), առկա

[53] http://crrc.am/research-and-surveys/ongoing-projects/social-cohesion-survey?lang=hy

է նաեւ որոշակի ստիգմատիզացիա մածամասնության մաս չլինելու կամ «աղանդավորական» լինելու հետ կապված: Ստիգմայի առկայությունը հստակորեն նշված է հայկական ՀԿ-ների կողմից իրականացված ուսումնասիրություններում:

Օրինակ՝ Եւրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից պատվիրված հանդուրժողականության վերաբերյալ հանրային ընկալումների շուրջ ուսումնասիրության համաձայն՝ «Հայաստանում այսօր լայն տարածում է գտել պսեւդոազգայնականությունը, համաձայն որի կրոնական եւ ազգային պատկանելիությունը նույնացվում է: Մարդիկ անհանդուրժող են այլ կրոնական հայացքներ ունեցողների նկատմամբ ոչ միայն այն պատճառով, որ նրանց հայացքները իրենց համար սխալ են կրոնի տեսանկյունից, այլ որովհետեւ, ըստ իրենց պատկերացման, այդ հայացքները դավաճանում են ազգային կրոնաէթնիկությանը եւ խարխլում ազգային միասնությունը: Այսինքն՝ մեր երկրում այլ կրոնական հայացքների գոյությունն ընդունելը, այլ կրոնական հոսանքների գործունեությունը հանդուրժելը տվյալ դեպքում մեկնաբանվում է որպես սպառնալիք ազգի անվտանգությանը կամ դավաճանություն:»:[54]

ԱՄՆ կառավարության 2012թ. «Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը» արձանագրում է, որ գրանցված կրոնական խմբերի մեծ մասը իրենց գործունեության ընթացքում չեն հանդիպել իրավական զգալի խոչընդոտների, սակայն կրոնական պատկանելության, հավատի եւ պաշտամունքի հիմքով հասարակական խտրականության վերաբերյալ բազմաթիվ բողոքներ են եղել: «Փոքրամասնական կրոնական խմբերի անդամները զգացել են խտրականություն եւ անհանդուրժողականություն հասարակության կողմից, այդ թվում եւ աշխատավայրում: Բազմաթիվ լրատվամիջոցներ ցուցաբերել են կողմնակալ վերաբերմունք փոքրամասնական կրոնական խմբերի դեմ», ասվում է զեկույցում[55]: Այս զեկույցում «հասարակական խտրականությունը» կարեւոր հասկացություն է, քանի որ շատ երեւույթներ, ինչպիսին «ստիգմատիզացիան», «օտարումը» եւ «ստորացումը», ավելի շուտ տեղի են ունենում հասարակական մակարդակում, հաճախ ԶԼՄ-ների միջոցով՝ պետության անմիջական եւ ուղղակի վերահսկողության շրջանակից դուրս:

---

[54] www.epfound.am/files/tolerance_in_armenia_occasional_policy_brief.pdf
[55] http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/irfr2012_arm.pdf

Քանի որ այս հարցով չեն իրականացվել հատուկ ուսումնասիրություններ, շատ դժվար է ձեւակերպել, թե ինչպես է առաջանում անհանդուրժողական վերաբերմունքը եւ ստիգմատիզացիան ու որքանով են լրատվամիջոցներն իրապես ներգրավված, կա՞ն արդյոք տարբերակումներ չափահասների եւ երեխաների միջեւ, եւ արդյոք երեխաներն ավելի խոցելի՞ են այդ դեպքերում: Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է իրականացնել նաեւ դաշտային ուսումնասիրություն եւ անցկացնել մանրամասն հարցազրույցներ հայ հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ:

II. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Հայոց Առաքելական Եկեղեցու պատմությունը որպես դպրոցական պարտադիր առարկա

Ավետարանական Եկեղեցու անդամ Էմիլ Սարգսյանն ասում է, որ իր որդին՝ 16-ամյա Էդգարն, անընդհատ բախումներ է ունենում եկեղեցականների հետ, ովքեր դպրոց են գալիս «Հայոց Եկեղեցու պատմություն» դասավանդելու նպատակով: «Էդգարը հրաժարվել է ընդունել առարկայում ներառված գաղափարները: Արդյունքում եկեղեցու սպասավորը գալիս է դպրոց որդուս համոզելու, որ եկեղեցու գաղափարները ճիշտ են: Սակայն երբ որդիս շարունակում է պնդել իր տեսակետը, ուսուցչուհին ողջ դասարանի առաջ ասում է, որ նա աղանդի անդամ է: Ուսուցչուհին պարտադրում է իր սեփական գաղափարները, չնայած ենթադրվում է, որ մարդիկ ազատ են ընտրություն կատարելու հարցում»: Սա մեջբերում է Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտի «Հայաստանում քննադատվում է կրոնական կրթությունը»[56] հոդվածից, որտեղ անդրադարձ է կատարվում Հայաստանի որոշ դպրոցներում տիրող բարքերին:

Հայաստանյան ՀԿ-ները, միջազգային կազմակերպությունները եւ միջկառավարական մարմինները պնդում են, որ այս դպրոցական պարտադիր առարկան խախտում է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ըստ որի Հայաստանում կրթությունն աշխարհիկ է: Կրթության եւ գիտության նախարարությունն, իր հերթին, հավաստիացնում է, որ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան իր բնույթով աշխարհիկ է եւ չի պարունակում կրոնական դասավանդման կամ քարոզչության որեւէ տարր:

[56] http://iwpr.net/report-news/religious-teaching-armenia-criticised

ՌԱԵՀ-ի վերը նշված Հայաստանի վերաբերյալ զեկույցն ընդգծում է, որ «Կրոնական ազատության ոլորտում առկա է անհանդուրժողականության ակնհայտ վտանգ: Կրոնական փոքրամասնություն հանդիսացող աշակերտները դպրոցներում խտրականության են ենթարկվում: Ինչպես նաեւ շարունակաբար փողոցներում փակցվում են «աղանդների» դեմ քարոզչության պաստառներ: Ազգային անվտանգության ծառայությունը հետեւում է սովորական կրոնական գործունեությունը:[57]

Ըստ Համագործակցություն հանուն ժողովրդավարության ՀԿ-ի կողմից իրականացված «Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում»[58] ուսումնասիրության, չնայած ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության եւ այլ կառավարական մարմինների հավաստիացմանը, առարկայի ուսումնական ծրագիրը մշակվել է ՀԱԵ-ի կողմից, ուսուցիչները վերապատրաստվել են ՀԱԵ-ի ներկայացուցիչների կողմից եւ դասընթացը պարունակում է կրոնական քարոզչության տարրեր: Վերջերս Բաց հասարակության հիմնադրամների հայաստանյան մասնաճյուղը պատվիրել է իրականացնել դասագրքերի ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը դեռեւս հրապարակված չէ:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովի 1,790-րդ հանդիպման արձանագրությունում, որը հասանելի է նաեւ համացանցում, Հայաստանի մասով զեկուցողները Հայաստանի պատվիրակության ուշադրությանն են ներկայացրել մի շարք լուրջ խնդիրներ: Օրինակ՝ Հայաստանի մասով զեկուցող պարոն Գաստոն մասնավորապես նշել է. «Ներկայումս չկա որեւէ օրենսդրական ակտ, որը համապարփակ կերպով կընդգրկեր երեխաների իրավունքները: Նման դրույթները սփռված են մի քանի օրենքներում: Կա՞ արդյոք այս թեմայով մեկ օրենք մշակելու ծրագիր: Ըստ ստացված տեղեկությունների, այն դեպքում, երբ որոշ աշխատանքներ էին կատարվել երեխաների իրավունքներն ավելի լավ ներկայացնելու համար, ուսուցիչները, դատավորները եւ երեխաների հետ աշխատող այլ մասնագետներն իրենց վերապատրաստման ժամանակ ցուցումներ չեն ստացել Կոնվենցիայի եւ, ընդհանուր առմամբ, երեխաների իրավունքների վերաբերյալ, իսկ 2004թ. Հանձնաժողովի կողմից ներկայացված եզրափակիչ դիտողությունները երբեւէ չեն թարգմանվել հայերեն: Վկայակոչվե՞լ է արդյոք կոնվենցիան եւ մեջբերվե՞լ է արդյոք որպես դատական կարգավորման հիմք: Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել վաղ ամուսնության հետ կապված ապօրինի գործելակերպի դեմ պայքարելու համար: Վերջապես, նշելով, որ կրոնի մասին առարկան պարտադիր

[57] www.gov.am/u_files/file/kron/ARM-CBC-IV-2011-001-ENG.pdf
[58] http://www.religions.am/files/1706/pastathter/ps1.pdf

է դպրոցներում եւ վերաբերում է միայն Հայ Առաքելական Եկեղեցուն, նա հարցրել է, թե ինչ քայլեր են ձեռնարկվել կրոնական փոքրամասնությունների երեխաների կրոնի ազատության իրավունքն ապահովելու համար»:[59] Զեկուցողի հարցադրումներն անպատասխան են մնացել:

Հանձնաժողովը նաեւ պետությունից պահանջել է իր հաջորդ պարբերական զեկույցում տրամադրել մանրամասն տեղեկություններ, այդ թվում՝ չխմբավորված վիճակագրական տվյալներ, էթնիկ փոքրամասնությունների տարրական, միջնակարգ եւ բարձրագույն կրթության ոլորտներում ներգրավվածության վերաբերյալ[60].

2. Դպրոց չհաճախելը

Վիճակագրական շատ քիչ տեղեկություններ են հասանելի դպրոց չհաճախող երեխաների մասին: Հատկապես դժվար է ստանալ տվյալներ բաղդատված ըստ տարիքի, սեռի, բնակության վայրի, էթնիկ ծագման, կրոնական պատկանելության եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանի երրորդ եւ չորրորդ համակցված պարբերական զեկույցի նախապատրաստման համար ենթակա խնդիրների ցանկում (2012թ.), Հայաստանի կառավարությունից պահանջել է նման մանրամասն տվյալներ (էջ 3)[61]: Սակայն, ամենայն հավանականությամբ, նման տվյալներ ուղղակի գոյություն չունեն: Միաժամանակ եւ՝ ՌԱԵՀ-ը եւ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանին վերաբերող իրենց նորացված փաստաթղթերում նշում են, որ դպրոց չհաճախող երեխաների թիվը բավականին մեծ է :

2011թ.-ի ՌԱԵՀ-ի զեկույցը նշում է. «ՌԱԵՀ-ը տեղեկություններ է ստացել, որ շատ եզդի երեխաներ, մասնավորապես աղջիկներ, լքում են դպրոցը: Սա ավելի շատ պայմանավորված է կրթության նկատմամբ նրանց ծնողների մոտեցմամբ, քան դպրոցում նրանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքով: ՌԱԵՀ-ն առաջարկում է համայնքային մակարդակով ուշադրությամբ հետեւել եզդի երեխաների դպրոց հաճախելու հարցին եւ բարձրացնել ծնողների իրազեկվածության մակարդակը կրթություն ստանալու առավելությունների վերաբերյալ»[62]:

---

59 CRC/C/CR.1790

60 Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման հանձնաժողովի եզրափակիչ դիտողություններ, 2011թ. CERD/C/ARM/CO/5-6

61 CRC/C/ARM/Q/3-4

62 http://www.gov.am/u_files/file/kron/ECRI.pdf

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանի երրորդ եւ չորրորդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ իր եզրափակիչ դիտողություններում[63] (հունիս 2013թ.) մտահոգություններ է արտահայտել տարրական դպրոցից հետո դպրոց չհաճախելու կապակցությամբ եւ առաջարկել է ուսումնասիրել չհաճախելու պատճառները, ինչպես նաեւ խրախուսել երեխաներին շարունակել կրթությունը միջնակարգ դպրոցում:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կայքում հրապարակված հոդվածի համաձայն՝ Կրթության նախարարությունը եւ ՀՀ Վիճակագրության ազգային ծառայությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի տեխնիկական եւ ֆինանսական աջակցությամբ հետազոտություն են իրականացրել եւ պարզվել է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում դպրոց չհաճախելու տոկոսը ազգային միջինից երկու անգամ ավել է[64]: Հոդվածում նշվում է նաեւ, որ 2001թ. զեկույցի առաջարկություններից մեկը վերաբերում էր իրադրության նոր գնահատմանը, սակայն մինչեւ օրս հստակ չէ, թե արդյոք նման գնահատում երբեւիցե իրականացվել է:

III. ՎԱՂ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վաղ ամուսնությունների խնդիրն ավելի բնորոշ է եզդի համայնքին: 2012թ.-ին ՀՀ կառավարությունը փորձեց ամուսնության օրինական տարիքը 17-ից դարձնել 18, սակայն եզդի համայնքը լրջորեն ընդդիմացավ այս նախագծին: «Ամուսնություն ըստ ավանդույթի. Հայաստանի եզդիները դեմ են կառավարության օրինագծին» հոդվածում կարդում ենք՝ «12 տարեկան չդարձած աղջիկներին ասում են `դու արդեն մեծ ես, տանից դուրս մի՛ արի, երկար հագի՛, տեղ մի՛ գնա, էս արա՛, էն արա՛: Ու փոխում են մտածողությունը: Աղջկան չեն թողնում այլ բանի մասին մտածել, բացի ամուսնությունից»:[65] Խնդրի վերաբերյալ մեկ այլ հոդվածի կարելի է ծանոթանալ EurasiaNet տեղեկագրում:[66]

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովին ուղղված իր գրավոր պատասխանում[67] ՀՀ կառավարությունը ներկայացրել է հետեւյալ տվյալները 18

63 CRC/C/ARM/CO/3-4
64 www.unicef.org/armenia/reallives_2345.html
65 http://armenianow.com/hy/society/features/39808/yezidi_armenia_marriage_law_aziz_tamoyan
66 www.eurasianet.org/node/65942
67 Երեխաների իրավունքների Կոնվենցիայի իրականացում: Հայաստանի գրավոր պատասխանը: CRC/C/ARM/Q/3-4/Add.1 (էջ 26)

տարեկանը չլրացած ամուսնացած աղջիկների վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային ստորաբաժանումների կատարած գրանցումների հիման վրա:

Աղյուսակ 9

տարիք	2008		2009		2010		2011	
	տղ	կին	տղ	կին	տղ	կին	տղ	կին
16	0	0	0	0	0	0	0	0
17	0	99	0	99	0	91	0	57
18	51	663	75	663	51	603	12	86

Այնուամենայնիվ, հայտնի է, որ շատ հաճախ Հայաստանի քաղաքացիները, անկախ նրանց կրոնական կամ էթնիկ պատկանելությունից, պաշտոնապես չեն գրանցում ամուսնությունը՝ գերադասելով կրոնական ծեսը եւ/կամ քաղաքացիական համակեցությունը:

ՄԱԿ-ի նույն հանձնաժողովը մտահոգությամբ նշում է, որ եզդի համայնքի աղջիկները հաճախ ամուսնանում են ամուսնության օրինական տարիքից ցածր տարիքում իրենց ավանդական ծիսակատարության օրենքներով: Հանձնաժողովը խորհուրդ է տալիս պետությանը լիովին ամրապնդել օրենքով նախատեսված ամուսնական տարիքի կիրառման դրույթն ամուսնության բոլոր ձեւերի համար, ինչպես նաեւ մշակել եւ ձեռնարկել համակողմանի ծրագրեր աղջիկ երեխաների առողջության, կրթության եւ զարգացման իրավունքի նկատմամբ վաղ ամուսնությունների բացասական ազդեցության մասին իրազեկվածության ցածր մակարդակը բարձրացնելու համար, որպես թիրախ ընտրելով հատկապես ծնողներին եւ համայնքի առաջնորդներին:[68]

Հանձնաժողովը մտահոգությամբ նշում է նաեւ, որ պետությունը տեղյակ է եզդի եւ քուրդ համայնքներում տղամարդկանց եւ կանանց, ինչպես նաեւ չափահասների եւ երեխաների միջեւ հարաբերությունների հաստատման պահպանողական

[68] ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտե՝ եզրափակիչ դիտողություններ Հայաստանի երրորդ եւ չորրորդ համակցված պարբերական զեկույցի վերաբերյալ. ընդունվել է կոմիտեի վաթսուներեքերորդ նստաշրջանի ընթացքում (2013թ. մայիսի 27- հունիսի 14) CRC/C/ARM/CO/3-4

ավանդույթների մասին, որոնք խախտում են իրավունքի հավասարության սկզբունքը, սակայն ազգային փոքրամասնություններին ուղղված իր ծրագրերը եւ միջոցառումները չեն լուծում այս խնդիրները: Հիշեցնելով պետությանը յուրաքանչյուր անձի համար մարդու իրավունքների հավասարապես երաշխավորման պարտավորությունը՝ Հանձնաժողովը կոչ է անում պետությանը ազգային փոքրամասնություններին ուղղված իր միջոցառումներում հաշվի առնել խտրական ավանդույթները վերացնելու անհրաժեշտությունը[69]:

Չնայած ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովի մտահոգություններին եւ առաջադրած հրամայականներին, ինչպես նաեւ միջազգային հասարակական կազմակերպությունների առաջարկություններին՝ եզդի համայնքը պնդում է, որ վաղ ամուսնությունները նրանց ավանդույթների մի մասն է կազմում եւ պետք է այն հարգվի պետության եւ միջազգային հանրության կողմից:

2013թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց Ընտանեկան օրենսգրքում: Նոր դրույթների համաձայն՝ անձը կարող է ամուսնանալ նաեւ 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաեւ 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, եւ ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է (10-րդ հոդված)[70]:

---

69 ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման հանձնաժողով. եզրափակիչ դիտողություններ, 2011թ. CERD/C/ARM/CO/5-6

70 http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4729&lang=arm

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԱԵՀ-ի, ՄԱԿ-ի, ԵԻԿ-ի, ՌԽՎԿ-ի եւ Մարդու իրավունքների հանձնաժողովներն իրենց զեկույցներում շարադրել են բազմաթիվ լուրջ նկատառումներ եւ հանձնարարականներ: Դրանք ներառում են օրենսդրական փոփոխություններ, միջոցների հայթայթում ու ներդրում, ինչպես նաեւ տվյալների հավաքագրում: Ջկրկնելով այդ հանձնարարականները՝ ստորեւ ներկայացված են առաջարկներ, որոնք բխում են այս հետազոտության նպատակներից:

1. Կատարել դաշտային հետազոտություններ եւ մի շարք գիտական ուսումնասիրություններ պարզելու համար, թե ինչ են մտածում եւ զգում երեխաները եւ երիտասարդները այս ուսումնասիրության կողմից առաջ քաշված խնդիրների շուրջ: Այն է՝ լրատվամիջոցների կողմից հիմնահարցերի ներկայացումը, կրոնական խնդիրների վերաբերյալ ուսումնական ծրագրերը, դպրոց չհաճախելը եւ վաղ ամուսնությունները: Կարեւոր է նաեւ փորձարարական մեթոդով հնարավորինս պարզել, թե արդյոք փոքրամասնությունների խմբերին պատկանող երեխաներն իրապե՞ս ենթարկվում են կրկնակի խտրականության՝ աղքատության եւ սոցիալական մեկուսացման:

2. Իրական դեպքերի ու պատմությունների հիման վրա պարզել երեխաների եւ, հատկապես, փոքրամասնությունների խմբերին պատկանող երեխաների իրավունքների ոտնահարման տիպաբանությունը: Որո՞նք են իրենց համայնքների ներսում եւ հայ հասարակությունում չափահասների եւ երեխաների նկատմամբ վերաբերմունքների նմանությունները եւ տարբերությունները:

3. Ուսումնասիրել փոքրամասնությունների երեխաների առողջապահական խնդիրները, քանի որ այն առավել չուսումնասիրված ու չբացահայտված թեմաներից մեկն է: Մասնավորապես, անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել տնային ծնունդների, պատվաստումների, երեխայի բժշկական խնամքի, արյան փոխներարկման եւ այլ բժշկական խնդիրներին:

4. Անցկացնել հատուկ ուսումնասիրություն, որպես հիմնական թիրախ ընտրելով փոքրամասնությունների խմբերի, այդ թվում՝ երեխաների եւ երիտասարդների, աղքատության եւ սոցիալական մեկուսացման խնդիրները: Հաշվի առնել նաեւ ապաստան հայցողներին, փախստականներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց, հատկապես Հայաստանում բնակվող իրանցիներին:

5. Ձեռնարկել ուսումնասիրություն դպրոց չհաճախելու արմատական պատճառների վերաբերյալ եւ խրախուսել երեխաներին շարունակել ուսումը միջնակարգ դպրոցներում:

6. Հնարավորության դեպքում ՀՌԿԿ պատվիրել 2014թ.-ի «Կովկասյան բարոմետր» հետազոտությունում ավելացնել մեր թեմային վերաբորող հատուկ մաս մանրամասն տվյալներով (բնակության վայր, սեռ, կրթություն եւ այլն): Հատուկ մեթոդաբանությունը, հատկապես կրոնական խմբերի անվանումները, ինչպես նաեւ հարցերը պետք է պատրաստվեն կրոնի եւ փոքրամասնությունների հարցերով փորձագետների մասնակցությամբ:

7. Խորհուրդ տալ ՀՀ կառավարությանը հաշվի առնել կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների երեխաներին/երիտասադրներին եւ նրանց հատուկ կարիքները Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարություն մշակելիս:

8. Խորհուրդ տալ ՀՀ կառավարությանը հետեւել միջազգային հանրության առաջարկություններին եւ հնարավորություն ընձեռել չմասնակցել դպրոցական ծրագրի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասերին այն փոխարինելով այլ առարկայով:

9. Խորհուրդ տալ ՀՀ կառավարությանը իրազեկել էթնիկ փոքրամասնությունների, հատկապես եզդի համայնքի ծնողներին՝ ընդգծելով կրթության առավելությունները: Խրախուսել փոքրամասնություններին պատկանող ընտանիքների երեխաներին կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում ՀՀ Կրթության եւ գիտության նախարարի գոյություն ունեցող ենթաօրենսդրական ակտի փոխարեն համապատասխան օրենքի ընդունմամբ:

10. Խորհուրդ տալ ՀՀ կառավարությանը հատուկ ուշադրություն դարձնել գենդերային խնդիրներին, հատկապես փոքրամասնություններին պատկանող ընտանիքների աղջիկների առումով:

11. Խորհուրդ տալ ՀՀ կառավարությանը, միջազգային կազմակերպություններին եւ տեղական ՀԿ-ներին անցկացնել վերապատրաստման դասընթացեր, հատուկ ուսուցման դասընթացներ եւ գործնական սեմինարներ ա) փոքրամասնությունների խմբերին պատկանող երեխաների եւ երիտասարդների համար իրենց իրավունքների, ԵԻԿ-ի եւ ՄԻԵԿ-ի եւ այլ համապատասխան թեմաների շուրջ եւ բ) դպրոցի տնօրենների, լրագրողների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ ծնողների համար մարդու իրավունքների, հանդուրժողականության եւ բազմազանության վերաբերյալ:

12. Խորհուրդ տալ ՀՀ կառավարությանը, ԶԼՄ-ներին եւ ՀԿ-ներին օգտագործել լրատվամիջոցների ուժը մարդու իրավունքների, համակեցության, հանդուրժողականության եւ բազմազանության գաղափարներն առաջ մղելու նպատակով:

Կրոնական ազատության վերաբերյալ օրենսդրությունը և կրոնական փոքրամասնությունների իրավիճակը Հայաստանում Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի, ինչպես նաև Անհանդուրժողականության և խտրականության եվրոպական հանձնաժողովի ուշադրության և հանձնարարականների առարկան են: Միևնույն ժամանակ, երեխաների իրավունքների պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի և Հայաստանի կառավարության միջև կնքված Գործողությունների ծրագրի առանցքային թեմաներից է:

Հետևաբար, Վրաստանում և Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան աջակցությամբ Եվրոպայի խորհուրդը նախաձեռնեց մի ծրագիր, որի նպատակն է կրոնական փոքրամասնությունների երեխաների և պատանիների իրավունքների պաշտպանությունը: Ծրագիրը նախաձեռնվել էր կրոնական փոքրամասնությունների հանդեպ դրսևորվող անհանդուրժողականության դեմ պայքարելու նպատակով, ներառյալ առցանց տարածքում, և այն շատ կարևոր էր այս խմբերի երեխաների և պատանիների խնդիրներն ավելի լավ հասկանալու առումով:

Այս զեկույցը վերանայում է առկա ուսումնասիրությունները՝ կապված փոքրամասնությունների (կրոնական և էթնիկ) երեխաների և պատանիների ունեցած խնդիրների և դժվարությունների հետ, ներառյալ նրանց հանդեպ դրսևորված անհանդուրժողականությունը և ստիգման և դրանց հնարավոր ազդեցությունը նրանց առօրյա կյանքի ու բարեկեցության վրա: Սույն ուսումնասիրության շրջանակներում և փաստաթղթերի ուսումնասիրության ողջ ընթացքում բնորոշվել են երեք հիմնական բնագավառ, որտեղ փոքրամասնությունների ընտանիքների երեխաների իրավունքների հստակ տեսանելի խախտումներ են գրանցվել: Դրանք են ստիգման և սոցիալական մեկուսացումը, խտրականությունը կրթության ոլորտում և վաղ ամուսնությունները: Զեկույցն առաջարկներ է տրամադրում հետագա ուսումնասիրության և համապատասխան կառավարական օղակների կողմից արձագանքների համար:

Kingdom of the Netherlands

Ուսումնասիրությանն աջակցել է Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատունը:

ARM

Եվրոպայի խորհուրդը Եվրոպա մայրցամաքում մարդու իրավունքերով զբաղվող առաջատար կազմակերպությունն է: Այն ներառում է 47 անդամ երկիր, որոնցից 28-ը Եվրամիության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ մի համաձայնագիր, որի նպատակն է պաշտպանել մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է կոնվենցիայի կատարումն անդամ երկրներում:

www.coe.int

http://book.coe.int

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE